

## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material


930-2

ԱՆԴՐԵՅ

= ԶԲՈԽՅՑԻ =  
ՊԵՌՈՒԵՐԵՐԻ ՀԵՏ  
1905 ԹՎԻ ՄԱՍԻՆ

Թարգմ. Հ. Ա. ՊԵՏՐՈՎՅԱՆ

ՀԻԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ - 1927



# ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

(ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ԲԱԺԻՆ)

ՀԿԽՈԾ  
Ք

ԱՆԴՐԵՅ




= ԶՐՈՒՅՑ =

ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ՀԵՏ

1905 ԹՎԻ ՄԱՍԻՆ

45-9334 A 39294

Թարգմ. ՀԱՐ. ՊԵՏՐՈՍՅԱՆ



ՀԻՍՈՒ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ - 1927

Դրառեալգար № 8ր. Հր. 484. Տիրաժ 4000.

---

Պետհրատի յերկըռըդ տպարան Յերկանում — 45.



## 1. ԶՐՈՒՅՑ ՊԻՌԵՐՆԵՐԻ ՀԵՏ 1905 ԹՎԻ ՄԱՍԻՆ

Յերեխեք, շատ ժամանակ չե, վոր մենք  
տոնեցինք Հռկտեմբերյան մեծ հեղափոխության  
8-րդ տարեդարձը։ Ո.թ տարի սրանից առաջ  
բանվոր դասակարգը, իւիչի ղեկավարությամբ,  
բուրժուազիայի ձեռքից իշխանությունը ուժով  
խլեց և ամբողջ աշխարհում առաջին բանվորա-  
կուղացիական պետությունն ստեղծեց։ Զես-  
գտնի մի պիոներ, վոր մեծ Հռկտեմբերի մասին  
չգիտենա։ Բայց թե ինչ տեղի ունեցավ մեզնում  
1905 թվին, այսինքն՝ 20 տարի սրանից առաջ, —  
այդ մասին շատ պիոներներ չգիտեն։

Մի ժամանակ բանվորները շատ վատ ելին  
ապրում։ Շատ ելին աշխատում, քիչ ստանում.  
բուրժուաների համար նրանց դեռ պատերազմ ել  
ելին քշում։ Յեվ ահա քսան տարի սրանից ա-  
ռաջ, բայց նիկների ղեկավարությամբ, առաջավոր  
բանվորները բռնակալ ցարից ու նրա մինիստր-  
ներից ազատվելու փորձ արին։ Բայց բանվոր-

ների ույժը փոքր եր, և առաջին հեղափոխությունը, իշխանությունը զավթելու այս հսկայական փորձը, ցարական կառավարությունը դաժան կերպով ճնշեց. Ռուսաստանի բանվորներն ու գյուղացիները շատ զոհեր տվին այդ ժամանակ չենց այդ փորձի մասին ե, վոր ուզում եմ պատմել:

## 2. ՌՈՒՍ-ՅԱՐՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Տարի տարվա վրա բանվորների կյանքն ավելի և ավելի վատանում եր. ոռնիկը պակասում եր, ստիպում ելին աշխատել առավոտից մինչեւ ուշ գիշեր. Վհչ հարմար բնակարաններ կային, վհչ վոտնամաններ. Կիսաքաղց ու տանջվելով որ ելին անցկացնում. Այդ դեռ բավական չե, բանվորները դեռ իրավունքներ ել չունելին, նրանց հետ այնպես ելին վարվում, ինչպես անասունների հետ. Գյուղացիներն, ամբողջ տարին անընդհատ աշխատելով, իրենց հացը գրոշով ելին վաճառում. Անբավականությունը մեծանում եր: Այդ ժամանակ Ռուսաստանը կառավարում ելին ցարը և մինիստրները, իշխաններն ու կոմսերը: Յեվ ահա այս թագաղիք շների ականջին հասավ թե բանվորների ու գյուղացիների մեջ դժգոհությունն աճում ե. զգացին, վոր շուտով իրենց վերջն ե, ու վճռեցին փակել բանվորների աշ-

ՔԵՐԸ, յԵՐԿԵՐԻ ՆԵՐՍԻ անկարգություններից՝ ՆՐԱՆՑ  
ուշադրությունն այլ կողմ դարձնել, վորպեսզի  
բանվորները, իրենց կարիքներն ու զրկանքները  
մոռանալով, մի ուրիշ բանով զբաղվեյին։ Բացի  
այդ, ցարական կառավարությունը ցանկանում  
էր արևելքում շուկաներ գրավել։

ՅԵՎ ահա նրանք կոիվ սարքեցին յապոնա-  
ցիների հետ։ Ակսեցին թալանել յապոնացիներին,  
սրանց անտառները. հարձակվում եյին խաղաղ  
բնակչության վրա, և վերջապես հանդուգն ա-  
րարքներով յապոնացիներին կռվի կանչեցին։ ՅԵՐԸ  
կոիվս սկսվեց, ցարն ու մինիստրները կարծում  
եյին, թե յապոնացիների հետ կռվելը հեշտ բան  
է և վոր ոռւսական բանակը մի քանի որվա մեջ  
ջարդ ու փշուր կանի յապոնացիներին։ ԱՃԵՆ  
ՄԵՂ մինչև անգամ բղավում եյին, թե՛ մենք եղ  
դեղին-երես մակակներին փափախներով կը  
թոցնենք։ Բայց բանն ուրիշ կերպ յԵղավ։ Յա-  
պոնացիները խորտակեցին ոռւսական նավա-  
տորմը ու ջարդուփշուր արին բանակը։ 1905  
թվի հունվարին ոռւսները տվին Պորտ-Արտուրը,  
մայիսին՝ Մուկդենը, ոգոստոսին Ցուսիմայի մոտ  
յապոնացիք կրկին խորտակեցին ոռւսական նա-  
վատորմը և ոռւս կառավարության ստիպեցին  
անձնատուր լինել և Պորտսմուտում խաղաղու-

թլան դաշինքն ստորագրել։ Բայլշիկներն այն ժամանակ ել ուզում եյին, վոր ցարական Ռուսատանը կռիվը տանուլ տա, վորովհետև այդ բանը ցարի և բուրժուազիայի դեմ կհաներ ամբողջ ժողովուրդը, և յապոնացիների դեմ մղվող կռիվը կփոխվեր կռվի՝ բուրժուազիայի դեմ։

### 3. ԳԱՐՈՆԸ

Նիկոլայ Ռոմանովի կառավարությունն ուժեղ վոստիկանություն և ժանդարմերիա ուներ։ Բայց ժանդարմերիայի բոլոր ջանքերը՝ ժողովրդին բռնի կերպով հանգստացնել, զուր եյին։ Անրավականությունը շարունակ մեծանում եր։ Անաջող կռիվ ավելի ևս սաստկացրեց այդ հուզմունքը։ Պրոլետարիատը պատրաստվում եր։ Բանվորական զանգվածի մեջ լուրջ սպառնալիք նկատելով, ցարական կառավարությունն այնպիսի մարդիկ եր վնտրում, վորոնք բանվորների և գյուղացիների այդ ալեկոծ ովկիանոսը հանդարտացնել կարողանալին, այլև թագավորին ու ժողովրդին հաշտեցնելին։ Այս բանին ձեռնամուխ յեղան տերտերներն ու լրտեսները, վորոնք հիմարացնում եյին բանվորներին, մոտենում եյին նրանց, ճանաչում ելին բանվոր դասակարգի առաջնորդներին և մատնում վոստիկանության

Ճեռքը։ Այդպիսի լրտեսներից մեկն երև և տեղաբեր Գապոնը։ Գապոնը նույն իսկ կազմակերպում եր բանվորներին, իբր թե բանվորների վիճակը բարփոքելու համար պայքարելու։ Միայն Պետրոգրագում 11 կազմակերպություն ուներ նա։ Բանվորները հավատում եյին նրան, իրենց հովանավոր ու հայրիկ եյին կանչում։

Յեվ ահա Գապոնն առաջարկեց բոլոր բանվորներին՝ գնալ ցարի մոտ և խնդրել նրան՝ իրենց վիճակը թեթևացնելու։ Պետիցիա (պահանջ) կազմեց, և հունվարի 9-ին բազմահազար մասսայով գնացին դեպի Զմերային պալատը։ Բայլ-շեիկները դեռ այն ժամանակ ասում եյին, վոր Գապոնը լրտես ե-վոստիկանության գաղտնի ագենտն ե, վոր նա ժանդարմական վարչությունից ոռծիկ ե ստանում, նրանց չհավատացին, և ահա թե դրանից ինչ դուրս յեկավ։

#### 4. ՀՈՒՆՎԱՐԻ 9-Ը

Հարյուր հազարավոր բանվորներ՝ սրբերի պատկերներով, թագավորի պատկերով, խաչով խաչվառներով գնում եյին դեպի պալատը։ Յերգում եյին՝ «Տեր, պահպանիր դու կայսրին»։ Գնում եյին առանց վորեւե հեղափոխական դրոշի և դրոշակի։ Գնացողներից և վոչ մեկը չեղ

մտածում ու չեր հավատում, թե զինվորները կը կրակեն իրենց վրա։ Բայց այդպես չեղավ։ Հայրթագավորի մոտ վոչ վոքի չթողին։ Սկսեցին անխնա գնդակահարել բանվորներին, ձիավորները վոտնատակ երին անում նրանց, կազակներն անգլթորեն կոտորում երին կանանց ու յերեխաներին, 1000-ից ավելի մարդ մասսվեց այդ որր։

Բանվոր դասակարգը հասկացավ, վոր ինքը թագավոր չունի և պետք ել չի վոր լինի և վոր միակ փրկությունը—թագավորին ու մինիսարներին տապալելն է։ Այս, այդ որը պրոլետարիատի համար սպի որ ե հանդիսանում, բայց միևնույն ժամանակ բանվոր դասակարգի՝ ցարիզմի հետ իր կռվի մտնելը գիտակցելու որ։ Յեվմենք տեսնում ենք, վոր հունվարի 9-ից հետո ամբողջ Ռուսաստանում գործադուլների և վոստիկանության ու բանվորության ընդհարումների ալիքը գլորվեց։ Այդպես յեղագ, որինակ, վարշավում, Ռիգայում, Լոձում և Թիֆլիսում։

Յեվ վոստիկանությունն անխնա սպանում եր հեղափոխականներին, որեցոր ձերբակալում, բանտերն ու տաժանավայրերը նստեցնում առաջապահ բանվորներին — հեղափոխության առաջնորդներին։

## 5. ԱՅԴ ԺԱՄԱՆԱԿԻ ՆՉ ԵՐ ՏԵՂԻ ՈՒՆԵՆՈՒՄ ԳՅՈՒՂԵՐՈՒՄ

Գյուղերում մեր բարեկամները — գյուղացիները, այդ ժամանակ բանվորների հետ ելին գնում, պաշտպանում ելին բանվորների սկսած հեղափոխությունը։ Գյուղերում նրանք բունտեր ելին սարքում կալվածատերերի դեմ, ազատություն, հող և հաց ելին պահանջում։ Գյուղացիք սեփական հող չունելին և կալվածատերերի համար աշխատում ելին ճորտերի պես։ Ապրելը շատ եր դժվարացել։ Սկզբում անկազմակերպ, բայց հետո ավելի և ավելի համերաշխ, ձեռքծեռքի տված բանվորների հետ՝ գյուղացիները ձեռք բերին իրենց իրավունքները։ 1905 թ. ոգոստոսին գյուղացիները Մոսկվայի մոտերքը նույնիսկ համագումար արին, և այդ համագումարը վճռեց չվճարել հարկերը։ Յեվ այդ ժամանակից գյուղացիք սկսեցին համախմբվել ու կազմակերպվել՝ կալվածատերերի հետ կռվելու համար։ Գյուղացիներին խաղաղացնելու համար թագավորը կազակներ ուղարկեց, վորոնք դաժան կերպով հաշիվ ելին տեսնում գյուղացիների հետ, ողգիներով ծեծում ելին, չարչարում ու տանջում։ Թե կազակներն ինչպես ելին հաշիվ տես-

Նուժ գլուղացիների հետ, այդ յերեսում ե հետեւալ փոքրիկ վոտանավորից։ Հսենք.

Ահա գլուղին մոտեցան,  
Գնդացիրներ շարվեցան.  
— Ե՞ս, ժողովուրդ, զեղովի  
Հավաքվեցեք ժողովի։

Գեներալն ե խոսում ահա.  
— Կալվածները այրեք, հա՞.  
Ազատություն, հող խնդրեք.  
Ազատություն համեցեք։

Հող տամ' ինչքան վոր ուզեք.  
— Որոտա, խումբ-խումբ դե կրակեք . . .  
Թնդաց մեկ-մեկ համազարկ,  
Գյուղում' լաց ու աղաղակ։

Ու գնդակներ շեշտակի  
Չեն խնայում վոչ վոքի.  
Ընկավ Դանելն աւեռ  
Ուղիղ սրտից վիրավոր։

Քեֆ, խրախճան չորս բոլոր . . .  
Բայց գլուղացին խեղճ, մոլոր,  
Պառավ, աղջիկ, — ճար տեսեք,  
Չուրը թափվեք, խեղդվեցեք։

Վողջ տները վառվեցին.  
Միայն գյուղի են ծալրին  
Խաչը մնաց ցից, համեստ...  
Այ քեզ ցարի մանիֆեստ:

## 6. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՆԱՎԱՏՈՐՄՈՒՄ

Հեղափոխությունը նավաստիներին ել հասվ։ Ամբողջ 1905 թվի ընթացքում ծովի վրա տեղի ելին ունենում (նավաստիների մեջ) խոշորագույն անցքեր։ Հուլիսի 14-ին ապստամբեցին «Տավրիկյան Պատյոմկին» դրահանավի նավաստիները։ Բայլշեիկներն ապստամբության ելին պատրաստվում, նավաստիների ու նավահանգստի քանվորների մեջ ազիտացիա ելին անում, բայց, ամբողջ նավատորմի ապստամբության համար նշանակված որից մի քանի որ առաջ, «Պատյոմկինի» նավաստիներն այլևս չելին յենթարկվում, գնդակահարեցին մի քանի սպաների, իրենց միջից ընտրեցին մի քանի կարսիր հրամանատարներ ու բաց ծով դուրս յեկան, կոչ սնելով մնացած ամբողջ նավատորմին՝ իրենց որինակին հետեւելու, Դրա պատճառն այն եր յեղել, վոր ապստամբության որն անպետք միս ելին բերել զրահապատ, և սպաներն ուղել ելին ստիպել դինվորներին՝ ուտել այդ միսը։ Նավաստիները

չելին յենթարկվել, և այդ հողի վրա մի ահազին հեղափոխություն տեղի ունեցավ նավաստիների մեջ։ Ուրիշ նավաստիներ ու նավահանգստի բանվորներ նրանց կողմը պահեցին։ Բայց ցարական կառավարությունը, լուրջ սպառնալիք զգալով այդ բանում, իր ամբողջ ուժը և դաժանությունը գործ դրեց և հեղափոխությունը ճնշեց։ Իսկ հեղափոխական նավը ծովը դուրս յեկավ և 11 որ ծովում դիմացավ, վորից հետո ստիպվեցավ անձնատուր լինել ոռւմինական իշխանության։ Նավը հանձնեցին ոռւմիններին, իսկ իրենք ցըվեցին յերկրի մեջ։

Այսպիսով, թե գյուղացիները և թե նավաստիները, հունվարի 9-ի մեծ դասն առնելով, հասկացան, թե ինչպես պետք է գործել թագավորի դեմ, և ամեն տեղ զենքը ձեռքներին ու կազմակերպված դուրս յեկան։ Յապոնացիների դեմ ուղղված կոիվը փոխվեց կովի՝ գործարանատերերի, կալվածատերերի և սպաների դեմ, ինչպես և բայլշեիկներն ելին ուզում։ Բայց յեթե բանվորների, նավաստիների և գյուղացիների առաջին փորձերն անաջող ելին, դրա փոխարեն, բանվոր դասակարգի դահիճներին ամենեին չհաջողվեց խաղաղացնել յերկիրը, զսպել ապստամբած ժողովուրդը։ Ինչքան ել աշխատում ելին, ինչ

դաժանություններ եւ գործ ելին դնում, անմեղ արյուն թափելով, հեղափոխությունը շարունակ մեծանում եր ու սաստկանում։ Յեվ ահա թագավորի մինիստրներն ու խոսհրդականներն ըսկսեցին դատել ու կշռադատել և վճռեցին խաբեյությամբ հանգստացնել բանվոր դասակարգին։

## 7. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի ՄԱՆԻՖԵՍՑ

Հոկտեմբերի 17-ին թագավորը հրատարակեց իր հռչակավոր մանիֆեստն ազատության մասին։ Այդ մանիֆեստում ասվում եր, թե ժողովը ըստին հավաքութների, խոսքի, մասուլի ազատություն և անձի անձեռնմխելիություն ե տըրպում։ Պետական Դումայի համար ընտրության իրավունք եր տրվում, թագավորը շատ բան խոստացավ, բայց բոլորը սուտ բան դուրս յեկավ։ Արդեն հետեյալ որը նույնիսկ, ով փորձում եր կառավարության պակասությունների մասին ազատ արտահայտվել, նրան ձերբակալում ու տաժանավայր ելին ուղարկում։ Իսկ Պետական Դուման ցըվում ելին քեֆներն ուզած ժամանակը, խոստանալով կըկին հրավիրել, յերբ հարկ լինի։

Բայց այդ «համարն», ի հարկե, չանցկացավ։ Բանվոր դասակարգն իսկույն հասկացավ արքա-

յական դահիճների այդ ֆոկուսները, և բայլշեիկները լոզունգ բաց թողին. «զենքերը վայր չդնել»:

Իսկ զեներալ Տրեպովը — այդ հայտնի դահիճը, հրաման արձակեց, վոր բանվորների վրա անգնդակ (կեղծ) համազարկեր չտան, այլ իսկական փամփուշտներ կրակեն, և վոր հեղափոխականների համար փամուփշտներ չխնայեն:

## 8. ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ԱՆՑՔԵՐԸ

Բայլշեիկները պատրաստվում են ու զինում բանվորներին: Թագավորի մանիֆեստում ու Տրեպովի հրամանը կրկին անգամ ապացուցեցին, վոր զենքի ուժով սիայն կարելի յէ արդարության հասնել: Ու նորից ամբողջ Ռուսաստանում գործադուներ, խոռվություններ ու վոստիկանության հետ բանվորների զինված ընդհարումներ, սպանություններ, ձերբակալություններ, հալածանքներ սկսեցին: Նոյեմբերի սկզբին կը ոնշատում ապստամբեցին նավաստիները: Այս ապստամբությունն ել զազանաբար ճնշվեց: 100-ից ավելի նավաստի սպանվեց ճնշման ժամանակ: Նոյեմբերին սկսվեց նավատորմը գործադուլ արագ Սևաստապոլում: Ապստամբ բանվորների պատգամավորությունը, ապստամբությունը զեկավարելու համար, հրավիրեց ծովային պաշտոնա-

թող սպա Շմիդթին, վոր սիրով հանձն առավ ղեկավարությունը և ապստամբության գլուխ կանգնեց:

Շմիդթը, գալով «Աչակով» հածանավը, անմիջապես ազդանշան տվեց բոլոր նավերին՝ «ղեկավարում եմ նավատորմը», — մատեցավ «Պրուտ» հածանավին, վորի վրա տեղափորվել ելին ձերբակալված նավաստիները և, բոլորին ազատելով, «Աչակովի» վրա առավ: Բացի այդ, Շմիդթը հեռագիր ուղարկեց թագավորին, թե՝ սկզբան նավատորմը թագավորին ել չի լենթարկվում:

Այդ բանին իբրև պատասխան՝ Պետերբուրգից հրաման ուղարկեցին՝ «անհապաղ ճնշել ապստամբությունը»: Յեվ ամբողջ նավատորմիդն իսկույն ուղղվեց հեղափոխական նավերի դեմ: Կոփս սկսվեց: Հենց առաջին համազարկից՝ «Աչակովի» մեքենան փչացավ, իսկ մնացած նավերը, չդիմանալով թշնամիների հարձակման, ստիպված յեղան անձնատուր լինել: Այսից վատը «Աչակովի» նավաստիների բանն եր:

Շառագույն ցոլքով բոցավառվում եր հածանավը, և նավաստիներն ստիպված ելին նետել իրենց ծովի հորձանուտները, վորպեսզի լող տալով փրկություն գտնեն: Բայց նրանց գնդակահարում ելին ջրում, իսկ ազատվողներին՝ ափին

Ելին սպանում։ Ինքը՝ Շմիդթը, նավաստուհագուստներ հագնելով, ուզում եր աղատվել իր վորդու հետ, սակայն, նրան ձերբակալեցին։ Գիշերվա ժամի 3 ին կռիվը վերջացավ։

Դահիճները հաղթեցին։ 2000-ից ավելի մարդ ձերբակալել ելին միայն։ Իսկ թե քանի նավաստի վոչնչացավ ծովում, այդ մասին—վոչ մի խոսք։ Լեյտենանտ Շմիդթին ու նրա յերեք ընկերներին՝ Անտոնենկովին, Գևադկովին և Զասոնիկին ձերբակալեցին և հետո Բերեզան կղզու վրա գնդակահարեցին։

## 9. ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Դեռ մի ամիս առաջ Աչակովի ապստամբությունից, վորի մասին հենց նոր պատմեցի, Պիտերում ծնունդ առավ բանվորական պատգամավորների առաջին խորհուրդը, վոր 50 որ միայն գոյություն ունեցավ։ Հեղափոխական բանվորության կազմակերպման գործում այս առաջին խորհուրդը շատ բան արավ։ Իր շուրջը համախըմբելով գիտակից, հեղափոխական մասսան, նա սկսեց պատրաստել այդ մասսան զինված յելույթի։ Խորհուրդը հայտարարեց մամուլի ազատություն, 8-ժամյա բանվորական որ ու մա-

նիֆեստ հրատարակեց, վորով կոչ եր անում բան-  
վորներին ու գյուղացիներին՝ պետական գանձա-  
րանից յետ վերցնել պահ աված դրամները,  
վորպեսզի այդպիսով քչացնեն թագավորական  
գանձը, ներսից պայթեցնեն ցարական կառա-  
վարությունը: Բանվորներն ասեն կերպ պաշտ-  
պանում եյին իրենց առաջին խորհուրդը և բան-  
վորների ու գյուղացիների իսկական պետությունն  
ելին համարում այն:

Իսկ ցարական իշխանությունը յերկար ժա-  
մանակ սրում եր իր ատամները խորհրդի դեմ և  
ղեկտեմբերի Յ-ին բանտարկեց նա խորհրդի ներ-  
կայացուցիչ՝ ընկեր Խրուստալեվին, իսկ հետո,  
Գործադիր Կոմիտեյի բոլոր անդամներին՝ իր  
նիստերից մեկի ժամանակ: Խորհրդի այդ նիստը  
հենց վերջինը յեղավ:

Խորհրդի ձերբակալման բանվոր դասակարգը  
պատասխանեց մասսայական գործադուլներով ու  
չենթարկվելով: Բանվորներն իրենց շրջաններում  
բարեիկադներ եյին շինում և կյանքի ու մահվան  
կոիվ մղում: Խիստ եյին կոիմսերը մանավանդ  
Մոսկվայում, Կարմիր Պրեսնի շրջանում, Վոր-  
տեղ բանվորները յերկու շաբաթ կովում եյին  
բարերիկադների վրա: Մոսկվայի Կարմիր-Պրես-  
նիան ապստամբությունը Ռուսաստանի պրոլետա-

բիատի յեզրափակման խոսքն ու գործողությունն եր։ Գիտակցելով յուր անելիքները, բանվոր դասակարգը խնդրից ու աղերսից՝ վճռական գործողությունների, իշխանությունը խլելու կովի անցավ։

Յեւ 1905 թվի վերջերին ցարական կառավարությունը բանվոր դասակարգի ամենախոշոր չելութները խեղդեց արյան մեջ։ Բայց յերկար քաշեց ապստամբ բանվորների խաղաղացումն ամբողջ Ռուսաստանում, և միայն 1906 թվին ցարական դահիճները խաղաղացրին յերկիրը, հեղափոխության բոլոր ականավոր գործիչներին և առաջնորդներին տաժանավայր ու բանտերը քշելով։ Իսկ վորտեղ եր այդ ժամանակ Լենինը։ Ո՞վ գիտե, յերեխեք։ Ահա իսկույն պատմեմ, թե ուր եր Լենինը և թե նա ինչ դեր ե խաղացել 1905 թվի հեղափոխության մեջ։

## 10. ԼԵՆԻՆԸ ՅԵՎ ՌՈՒՍԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Վլադիմիր Իլյիչ Լենինը 1904 և 1905 թվականներին ապրում ու գործում եր արտասահմանում, Ժընսում (Շվեյցարիայի քաղաքում)։ Այդտեղից Լենինը դեկավարում եր Ռուսաստանի ամբողջ հեղափոխությունը, խորհուրդներ ու ցուցմունք-

ներ եր տալիս։ Այդտեղ եւ, ընկերներ ՌԱՄԻՆԱԿՈւ, Հունաչարսկու ու Վորովսկու հետ «Հառաջ» («Вперед») գաղտնի լրագիրն եւ հրատարակում։ Մայիս ամսին Հոնդոնում գումարվեց Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական կուսակցության՝ Բայլշենիկների Յ. Րդ համագումարը։

Համագումարը, վորի ղեկավարն ընկեր Լենինն եր, վորոշեց հեղափոխության գլխավոր անելիքները։ Առաջին համագումարն եր այս, վորին ներկա ելին լինում միայն բայլշենիկները։ Մենշևիկները հակառակ ելին այդ համագումարին և Փընկում մենշևիկական անջատ համագումար արին։ Բայլշենիկների համագումարը վորոշեց «Պրոլետար» լրագիրը հրատարակել, և Լենինն սկսեց աշխատել այդ լրագրի վրա։ Հենց վոր Ռուսաստանում հայտարարվեց հոկտեմբերի 17-ի մանիֆեստը, Լենինը յեկավ Պետրոգրադ, վորպեսզի այստեղ անմիջականորեն ղեկավարի հեղափոխությունը։ Լենինն ուրիշի պասպորտով եր ապրում, սկզբում Լենինգրադի մոտերքը, իսկ հետո Ֆինլանդիայում, և յերբ ցարական լրտեսները նրա տեղն իմացան, Լենինը կրկին արտասահման գնաց, ուր և մնաց մինչև 1917 թիվը։ Ապրելով համարյա կես-կուշտ, կես-սոված, դժվարին պայմաններում, նա անխոնջ աշխատում

Եր բանվորների և գյուղացիների գործի համար,  
Նա միշտ պատրաստ եր բանվոր դասակարգի  
գործի համար։ Ահա թե ինչու մենք սիրում ենք  
նրան, նրա անունն ենք կրում ու սովորում ենք  
նրա կտակներն իրագործել։

Ահա թե ինչու մեր առաջին լոգունզը և  
որինքն ե, պիոները հավատարիմ ե բանվոր դա-  
սակարգին և Իլիչի կտակներին։

Պատանի լենինականներ, մեր հայրերը 1905  
թվին հերոսական փորձ արին՝ իշխանությունը  
զավթելու, բայց այդ բանը չաջողվեց նրանց  
այդ ժամանակ, իսկ 1917 թվի հոկտեմբերին  
նրանք հասան իրենց նպատակին, պրոլետարական  
իշխանություն ստեղծեցին։ Պատրաստ յեղեք՝  
հայրերի գործը գլուխ բերելու, կոմունայի շենքի  
կառուցումն ավարտելու։



ԳԱԱ Հիմնարար Գիլ. Գրադ.



FL0039033